

## Կոտայքի մարզպետը փոխվարչապետի և ՏԿԵՆ նախարարի հետ հանդիպել են ողջաբերողիներին

Կոտայքի մարզպետ Ահարոն Մահակյանը փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանին ու Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանին օգոստոսի 26-ին ուղեկցել է Կոտայքի մարզ կատարած այցի ընթացքում:

Փոխվարչապետը, նախարարը և մարզպետը նախ հանդիպել են Գառնի համայնքի Ողջաբերող բնակավայրի սողանքային գոտում գտնվող 4-րդ և 5-րդ կարգի վնասվածության աստիճան ունեցող բնակելի տների բնակիչներին:

Հիշեցնենք, որ Կառավարությունը, 2022 թվականի հուլիսի 7-ի որոշմամբ, 241 մլն 897 հազար դրամ ֆինանսական աջակցություն է տրամադրել Ողջաբերող բնակավայրի սողանքային գոտում գտնվող 15 բնակելի տների բնակիչներին բնակարանի գնման վկայագրի միջոցով բնակարան գնելու համար:

Բնակիչները շնորհակալություն են հայտնել Կառավարությանը՝ տարիներ շարունակ բարձրաձայնվող խնդրին արձագանքելու և բնարականի գնման վկայագրեր տալու որոշման համար:

Այցի ընթացքում ծանոթացել են նաև Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակում «Գառնու տաճարի մերձակա տարածքի բարեկարգում» ենթածրագրի շինարարական աշխատանքների ընթացքին:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Արթուր Սողոմոնյանը տեղեկացրել է, որ այն 3.4 մլրդ դրամ արժեքով իրականացվող չորս ենթածրագրերից վերջինն է՝ հավելելով, որ դրանցից երեքն ավարտվել և հանձնվել են համայնքի բնակիչներին:

Ներկայում ընթանում են «Գառնու տաճարի մերձակա տարածքի բարեկարգում» ենթածրագրի շինարարական աշխատանքները, արժեքը՝ 551 մլն 945 հազար դրամ, որոնց ավարտը նախատեսված է 2022 թվականի դեկտեմբերին: Վերջնարդյունքում ստեղծվելու է կայանատեղի՝ զբոսաշրջիկներին տեղափոխող ավտոմեքենաների համար, բարեկարգվելու է դեպի Գառնու տաճար և նոր կայանատեղի տանող ճանապարհների մայթերը և երթևեկելի հատվածները, բարեկարգվող փողոցները կահավորվելու են ճանապարհային նշաններով, զբոսաշրջային ցուցանակներով և համապատասխան գծանշումներով, թեքահարթակներով: Նախատեսվում է նաև բարեկարգել Գառնու տաճարի պարսպի մերձակա հրապարակը, դիտահարթակը և այլն:

